

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԳՈՒԴՐՈՒՆ ՇՄԱՅՔԱՌԻՏԵՐ

ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ԹԱԳՈՒՀԻ ԹԵՈՓԱՆՈՅԻ ԿԱՊԸ ԲՅՈՒՋԱՆԴԻԱՅԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ^{1*}

1991 թ. եւ Հունաստանում, եւ Գերմանիայում նշվեց հիշատակը մի անձնավորության, որը տարբեր առումներով նշանավոր է ինչպես միջնադարյան Գերմանական թագավորության, այնպես եւ միջնադարյան Հունաստանի համար: Թեոֆանոն՝ Օտտո Բ.-ի բյուզանդացի կինը, մահացել է 991 թ. հունիսի 15-ին թագավորական նստավայր Նիմֆեգենում (նիդեռլանդերեն՝ Nijmegen): Այդ առիթով տեղի ունեցան մի շարք գիտաժողովներ, եւ այսօրվա իմացության սահմանում գնահատվեց այս նշանավոր թագուհու անձը եւ գործը²: Անվանի պատմաբանների եւ արվեստագետների բազմաթիվ զեկուցում-հրապարակումներից հասկանալի դարձավ, թե ինչու է Թեոֆանոն (Θεοφανώ, Արեւմուտքում՝ Theophanu³) հայտնի որպես Արեւմուտքի ամենանշանավոր թագուհիներից մեկը: Թեպետեւ ցանկանում էին բացահայտել կայսրուհու գործունեության բնորոշ գծերը Արեւելքում եւ Արեւմուտքում, սակայն նրա անձի մասին տեղեկությունները այնքան աննշան են, որ ընդհանրացնող հոդվածն անվանվեց այսպես՝ «Ո՛վ էր Թեոֆանոն»⁴:

1* Հոդվածը թարգմանված է Գուդրուն Շմալցբաուերի հետևյալ հրապարակումից՝ **Gudrun Schmalzbauer (Trier)**, Theophanu als Kaiserin des Westens in ihren Verbindungen zu Byzanz und Armenien. Armenisch-Deutsche Korrespondenz: Vierteljahresheft der Deutsch-Armenischen Gesellschaft, Nr. 83, März, 1994, էջ 24-36:

2 Կայսրուհի Թեոֆանոյի մահվան հազարամյակին էին նվիրված հետևյալ գիտաժողովները՝ Քյոլն (Շնյուտգենի թանգարան), Քյոլն-Գանդերսհայմ, Թեսալոնիկ, Հեռենն՝ Նիմֆեգենի մոտ, Քյոլն (միջնադարագետների հավաք):

3 Անվան ձևի մասին տե՛ս **G. S. Henrich**, Theophanu oder Theophano? Zur Geschichte eines “gespaltenen” griechischen Frauennamensuffixes. “Kaiserin Theophanu. Begegnung des Ostens und Westens um Wende des ersten Jahrtausends”, hrsg. A. v. Euw - P. Schreiner, II, Köln, 1991, էջ 89-99:

4 Գրդեն այս վերնագրի տակ (Wer war Theophano?) Ֆրանց Դյոլգերն արել է այդ հարցադրումը: Նորագույն գրականությունից առանձնացնում ենք վերոհիշյալ՝ “Kaiserin Theophanu. Begegnung des Ostens und Westens um die Wende des ersten Jahrtausends”, hrsg. A. v. Euw-P. Schreiner, I-II, Köln, 1991 ժողովածուն (հետազայում այս հոբելյանական հրատարակության նրկրորդ հատորը կնշենք K տառով), իսկ հետևյալ հոդվածները՝ “Kaiserin Theophanu. Prinzessin aus der Fremde - des Westreichs Große Kaiserin”, hrsg. G. Wolf (այսուհետև կհղենք՝ “Prinzessin”). “Bernward von Hildesheim und das Zeitalter der Ottonen”. Katalog der Ausstellung Hildesheim 1993, I-II, Hildesheim-Mainz, 1993 (հետազայում հոդվածների այս ժողովածույի առաջին մասը կհղվի B տառով). “Byzanz und das Abendland im 10. und 11. Jahrhundert, Beiträge des Symposiums in Köln und

Եթե դիմենք հունական միջնադարյան սկզբնաղբյուրներին, չենք գտնի նրա գոյությունը հավաստող որեւէ հետք. նրա անունն անգամ հայտնի չէ, չկա որեւէ տեղեկություն նրա կյանքի վերաբերյալ: Բյուզանդական հետաքրքրության ծանրության կենտրոնը Արեւելքն էր. կայսրությունը հիմնականում ուշադրությունը կենտրոնացրել էր հզորացած մահմեդական արաբների դեմ պայքարի վրա, որոնք Է. դարի կեսերից տարածվել էին Միջերկրականում եւ Փոքր Ասիայում: Այստեղ նախորդ դարերի հիմնական թշնամուց՝ պարսիկներից հետո խալիֆաթը մի նոր վտանգի աղբյուր էր դարձել՝ հասնելով մինչեւ Հայաստան եւ անգամ ձեռնամուխ էր եղել մայրաքաղաք Կոստանդնուպոլսի շրջապատմանը: Բյուզանդացիները չկարողացան պաշտպանել անգամ Հարավային Իտալիան, որը մասամբ Բյուզանդիային ենթակա մարզ էր: Հենց այստեղ՝ Իտալիայում էլ բախվում էր բյուզանդական քաղաքականությունը Արեւմուտքի տիրակալների հետաքրքրությունների հետ: Այս պայմաններում, իհարկե, դեր էր կատարում աճող ինքնագիտակցությունը, որը, ինչպես նախկինում, Արեւմուտքին թույլ չէր տալիս Բյուզանդական կայսրությունը դիտել որպես թելադրող ուժ:

919 թ. արեւելաֆրանկ-գերմանական կայսրության մեջ իշխանության հասան Սաքսերի տնից ծագող թագավորները՝ ստեղծելով տիրապետող դիրք, որն իր բարձրակետին հասավ 962 թ., երբ Հովհաննես ԺԲ. պապը Հռոմում թագադրեց Օտտո Ա.-ին: Հզորության եւ դիրքի աճի հետ միասին դրվեց մրցակցության ավանդական գաղափարը, որը բախվում էր Կոստանդնուպոլսի կայսեր՝ սեփական իշխանության ընդհանրականությունը եւ եզակիությունը պարտադրելու խնդրի հետ: Սակայն ընդհանուր հետաքրքրություններից պետք է անխուսափելիորեն բխեին նաեւ շփման եզրերը. մի կողմից՝ հրավերը Հարավային Իտալիա եւ կայսեր թագադրումը, մյուս կողմից՝ ընդհանուր շփոթվածությունը հունգարական ներխուժման⁵ հետեւանքով, առիթ ստեղծեցին: Որպեսզի այս վերջին խնդիրը սահմանի վրա կարգավորվեր, արդեն 949 թ. Օտտո Ա.-ը բյուզանդական կայսեր հետ ուներ մի պայմանագիր, որով հարցերը կարող էին լուծվել իր եղբոր դուստր Հադվիգի հետ Կոստանդին Է.-ի որդի՝ բյուզանդական թագաժառանգ Ռոմանոս Բ.-ի (դեռեւս 10 տարեկան) ամուսնությամբ: Ամուսնության ծրագիրն ակնհայտորեն լուրջ էր ընդունվել նաեւ բյուզանդական կողմից, քանի որ նրբաճաշակ հարսնացուն սկսել էր սովորել հունարեն, ըստ բյուզանդական սովորության՝ պատրաստվել էր նաեւ նրա նկարը: Այնուամենայնիվ, այս ամուսնական պայմանագիրը չեղյալ հայտարարվեց, քանի որ երիտասարդ օրիորդը ամուսնությունը ցանկանում

Bad Gandersheim, hrsg. E. Konstantinou (սպագրության հանձնված):

5 Հմմտ. O. Engels, Theophanu - die westliche Kaiserin aus dem Osten. տնւ “Die Begegnung des Westens mit dem Osten”. Kongreßakten des 4. Symposiums des Mediävistenverbandes in Köln 1991 aus Anlaß 1000. Todesjahres der Kaiserin Theophanu, hrsg. O. Engels - P. Schreiner, Sigmaringen, 1993, էջ 14:

էր խափանել իր ձեռով՝ ծամածռությամբ նկարվելու միջոցով: Ակներեւաբար, դեմքի համաչափությունը չէր համապատասխանում գեղեցկության այն ժամանակվա պատկերացմանը, որը չափանիշ էր ապագա թագուհու ընտրության ժամանակ⁶: Քաղաքական իրադարձությունները, Օտտոյի հաղթանակը հունգարների նկատմամբ Լեխֆելդի ճակատամարտում (955), դաշինքն ավելորդ դարձրին:

962 թ.՝ իր թագադրումից անմիջապես հետո, Օտտո Ա.-ը դինաստիական կապ հաստատեց բյուզանդական կայսերական իշխանության հետ, ուր 963 թ. որպես կայսր իշխում էր Նիկեյիոր Բ. Փոկասը՝ Ռոմանոս Բ.-ի անչափահաս որդու խնամակալը՝ ամուսնանալով վերջինիս մոր հետ: Մի կողմից՝ խնամությունը բյուզանդական տիրող ընտանիքի հետ Օտտոյի համար նշանակում էր սեփական դիրքի բարձրացման ճանաչում, մյուս կողմից՝ նա հույս ուներ ընդարձակել իր իշխանությունը՝ կապեր ստեղծելով Հարավային Իտալիայում, որը չէր ցանկանում թույլ տալ Նիկեյիորը. այնպես որ գերմանական կայսրը իր առջեւ նպատակ էր դրել կարգավորել խնդիրը նորոգված ամուսնական առաջարկի միջոցով: «Բյուզանդական մարզերի զավթման» (*“imperii nostri themata sibi usurpat”*)⁷ բողոքին ի պատասխան՝ Օտտոն ուղարկեց նախ ոմն Դոմենիկուսին՝ մի վեներաբլիցու, որը բյուզանդական կայսերը ակներեւաբար փորձեց հանդարտեցնել: Նա նաեւ առաքելություն ուներ Օտտո Ա.-ի որդի Օտտո Բ.-ի համար հարսնացու գտնելու: Թեեւ հարսնացուի անունը հայտնի չէր, հավանաբար նկատի ունեին Նիկեյիոր կայսեր «խորթ դստերը»՝ դեռեւս չորսամյա Աննային, կայսեր անչափահաս որդեգիրների՝ Բարսեղի եւ Կոստանդինի քրոջը: Նույն տարիքին էր նաեւ Օտտո Բ.-ը, որին, թերեւս բյուզանդական արքայադստեր հետ ամուսնությամբ ոգեւորելու համար՝ կայսերակից հռչակեցին, ինչը մինչ այդ Արեւմուտքում ընդունված չէր եւ հավանաբար տեղի ունեցավ բյուզանդական օրինակով⁸:

Հաջորդ տարիներին բանակցությունները շարունակվեցին. 968 թ. Կոստանդնուպոլիս մեկնած դեսպանության ղեկավարը Կրեմոնայի եպիսկոպոս Լյուտեպրանդն էր, որն այդ պահին ծառայության էր կայսեր մոտ, քանի որ 948-ից բյուզանդական մայրաքաղաքում էր եւ այնտեղ, ինչպես ինքն է պատմում, հանդիպել էր Մայնցի հարուստ վաճառական Լյուտեֆրիդին եւ իր հույն գրուցակից ներքինի Սողոմոնին, որոնք պետք է այն ժամանակ ճանապարհ հարթեին նմանատիպ առաջին ամուսնական ծրագրի համար: Հենց Լյուտեպրանդն է մեզ հաղորդում իր՝ Կոստանդնուպոլսում մնալու մասին՝

⁶ Կայսրուհու ընտրության՝ բյուզանդական գեղեցկության իդեալի մասին տե՛ս **H. Hunger**, die Schönheitskonkurrenz in “Belthandros und Chrysantza” und die Brautschau am byzantinischen Kaiserhof. “Byzantion” 35 (1965), էջ 150-158:

⁷ **Liudprand von Cremona**, Legatio, c. 25 (Quellen zur Geschichte der sächsischen Kaiserzeit, hrsg. A. Bauer - R. Rau, Darmstadt, 1977, էջ 546):

⁸ Հմմտ. **G. Tellenbach**, Zur Geschichte der Päpste im 10. und früheren 11. Jahrhundert. տե՛ս B, էջ 77:

այն արհեստական, արդարեւ միտումնավոր ու աննպաստ տեղեկությունը, որն ավարտվում է անհաջողությունների ողջ շարքով: Իտալական մարզերի նկատմամբ բյուզանդական, ինչպես նաեւ օտտոնյան օրինական պահանջները բյուզանդական կայսր Նիկեփոր Բ. Փոկասի հետ իր ձեռնարկած բավական անհաջող դիվանագիտական բանակցությունների վերջում բացատրվում է նրանով, որ «չսլաված դեպք էր, որ ծիրանիում ծնված կայսեր՝ ծիրանիում ծնված դուստրը օտար ժողովրդի տրվեր»⁹, եւ քանի որ, հավանաբար, այլեւս չէին հետաքրքրում բարիդրացիական հարաբերությունները, առաջադրվում էին անիրականաձևի պահանջներ, քանի որ Հարավային Իտալիայում հույս ունեին Օտտոյի դեմ ձեռք բերել մեկ այլ օժանդակ ուժ¹⁰:

Քննարկենք ծիրանածնության փաստարկը՝ Ժ. դարի մակեդոնական տիրակալների իշխանության պայմաններում: «Ծիրանածնունդ» հասկացությունը կայսերական գաղափարախոսության մեջ համարվում էր ինքնության հաստատում¹¹. այդ պատճառով հարց է ծագում՝ արդյո՞ք բյուզանդական կայսր Նիկեփոր Բ. Փոկասը, որը նախկին կայսեր այրի Թեոֆանո Ավագի հետ իր ամուսնության շնորհիվ էր իշխանության հասել, կարող էր սիրտ անել, լինելով սոսկ խնամակալի պաշտոնում, ծիրանի սենյակներից մեկում, այսինքն՝ այն ժամանակվա կայսրուհուց եւ նրա ամուսնուց ծնված իշխանադստերն ամուսնացնել երկրի սահմաններից դուրս: Այս փաստարկը, անշուշտ, եղել է ոչ ամենաառաջին պայմանը, որը հիմք է դարձել բանակցությունների ձախողման համար¹²:

Մեկ տարի անց՝ 969 թ., Նիկեփորը սպանվեց: Նրա հաջորդը՝ սեփական հորեղբոր սպանությանը մասնակցած Հովհաննես Ա. Չմշկիկը, իր իշխանության հիմքերն ապահովելու համար ամուսնացել էր երկու անչափահաս տղաների հորաքույր Թեոդորայի հետ: Նա նույնպես կառավարում էր որպես տիրապետող տնից սերող երկու թագաժառանգի՝ Բարսեղ Բ.-ի եւ Կոնստանդին Ը.-ի խնամակալ: Հավանաբար հյուսիսային սահմանի՝ Բալկանների իրավիճակը եւ պատերազմն ընդդեմ Կիեւի իշխան Սվյատոսլավի, ինչպես նաեւ Փոկասների տան վրդովմունքը Նիկեփոր Բ.-ի սպանությանը մասնակցելու համար, Չմշկիկին հարկադրեցին զիջել. այնպես որ Զյուլից Կոստանդնուպոլիս շտապեց արքեպիսկոպոս Գեորյի ղեկավարած դեսպանախումբը: Աղջիկը, որին Հովհաննես Ա. Չմշկիկը հարսնացու տվեց, անշուշտ, Մակեդոնյան տիրակալների տոհմից սերած ծիրանածնունդ արքայադուստր չէր, այլ իր

9 **Liudprand**, Legatio, c. 15 (Bauer-Rau: 538).

10 Տե՛ս **Engels**, Theophanu, էջ 16:

11 Հմմտ. **P. Schreiner**, Das Herrscherbild in der byzantinischen Literatur des 9. bis 11. Jahrhunderts. տն՝ Saeculum 35 (1984), էջ 132-151, 142. նաեւ **F. Tinnenfeld**, Die Braut aus Byzanz - Fragen zu Theophanos Umfeld und gesellschaftlicher Stellung vor ihrer abendländischen Heirat. "Prinzessin", էջ 248:

12 Տե՛ս **O. Kresten**, Byzantinische Epilogomena zur Frage: Wer war Theophano?, K, էջ 410. հմմտ. նաեւ "Theophanu", էջ 16:

եղբոր դուստր Թեոֆանոն էր: Ըստ Թիթմար Մերսեբուրգցու՝ Արեւմուտքում որոշ շրջանակներ այնքան էին հիասթափված հարսնացուի «ոչ ազնվագարն» ծագումից, որ պահանջում էին նրան ետ վերադարձնել¹³: Նոր կայսերը, որը չէր սերում տիրող հարստությունից, վտանգավոր էր թվում ծիրանածնունդի ամուսնությունը: Նա չունէր նաեւ ծիրանիում ծնվածների շրջանում, ինչպէս ասացինք, ընտրության մեծ հնարավորություն՝ բացառում է Օ. Կրեստենը¹⁴: Նրա ընտրությունը Թեոֆանոյի վրա ընկավ, որը կարող ենք ամենայն հավանականությամբ դիտարկել իբրեւ քաղաքական կամ ընտանիքի քաղաքականության ճարպիկ քայլ, քանի որ ոչ միայն Չմշկիկը, այլ նաեւ Բյուզանդիայում գործող ժամանակի այլ իշխանավորներ չէին սերում տիրապետող հարստությունից: Երկու կողմի համար էլ Թեոֆանոն կարող էր ապահովագրության երաշխիք լինել. Արեւմուտքում դիտվել որպէս հաշտության պայմանագրի պահպանման, իսկ Արեւելքում՝ Բյուզանդիայում տոն տվող ազնվականության, որից սերում էր Թեոֆանոն¹⁵, ազդեցության պահպանման երաշխիք: Չմշկիկի մահից հետո Արեւելք-Արեւմուտք քաղաքականությունը, թվում է, հաստատում է այդ:

Այս ենթադրությունը տանում է Թեոֆանոյի ծագման մասին վիճաբանությունների ակունք, նրան կապում բյուզանդական ընտանիքների ներքաղաքական պայքարի խնդիրների հետ: Թեոֆանոյի՝ Օտտո Բ.-ի հարսնացուի՝ երկար ժամանակ անհայտ մնացած ծննդաբանական եւ հետեւաբար ազգային ծագումը լայնորեն հետազոտվել է հատկապէս Գ. Վոլֆի, իսկ վերջերս նաեւ Օ. Կրեստենի ուսումնասիրություններում. ընդ որում, անունների ընտրության համակարգի (սկզբունք) կիրառման միջոցով վերականգնված Թեոֆանոյի ծագումնաբանական կապը՝ իբրեւ Հովհաննես Չմշկիկի եղբոր դուստր, կարող է հավանական լինել: Այս եզրակացությանը կարելի է հանգել Թեոֆանոյի երեխաների անուններից. նրանց անվանակոչում էին Թեոֆանոյի եւ Օտտո Բ.-ի ծնողների անուններով: Բյուզանդիայում, նաեւ Արեւմուտքում, սկսած Ժ. դարից, որպէս կանոն, ղեկավարվում էին սովորությամբ, ըստ որի՝ երեխաներին նախ եւ առաջ տրվում էին պապի եւ տատի անունները¹⁶: Թեոֆանոյի առաջին երեք երեխաները աղջիկներ էին: Մեկին հայրական տատի անունով կոչում էին Ադելհայդ, մյուսին հայրական հորաքույրներից մեկի անունով՝ Մաթիլդ, երրորդին՝ Սոֆյա, անուն, որը չի հանդիպում ամուսնու ընտանիքում: Այսպիսով, այս հիմքի վրա կարելի է ենթադրել, որ Սոֆյան կարող էր լինել Թեոֆանոյի մոր անունը: Թեեւ առհասարակ ընդունված է, որ

13 Stn **Thietmar von Merseburg**, Chronik II, c. 15, hrsg. W. Trillmich (Freiherr vom Stein-Gedächtnisausgabe 9), Darmstadt, 1957, էջ 50:

14 Stn **Kresten**, Epilegomena, in: K, էջ 408:

15 Stn **Engels**, Theophanu, էջ 17:

16 Հմմտ. **H. - W. Klewitz**, Namengebung und Sippenbewußtsein in den deutschen Königsfamilien des 10. bis 12. Jahrhunderts, in: Archiv für Urkundenforschung 18 (1944), էջ 23-37:

Սոֆյան ծնվել է երկրորդ դուստր Ադելհայդից հետո¹⁷, սակայն ըստ Օ. Պերստի¹⁸ հաջորդականությունը հետևյալն էր՝ Սոֆյա, Ադելհայդ, Մաթիլդա, Օտտո: Առաջնածին դստեր անվան մտածված շեղումը բացատրվում է մինչ օրս Հունաստանում հանդիպող սովորությամբ: Հավանական է նաեւ, որ Թեոֆանոն Բյուզանդիայից եկած իշխանուհու ինքնապատկերման իր առաջին դստերը, սկեսրոջը հակադրվելու համար, անվանել է սեփական մոր անունով:

Առանց սկզբնաղբյուրների աղքատիկ տեղեկությունները կրկին մեջբերելու, այստեղ հետեւենք Թեոֆանոյի ծագումը որոշելու՝ Գ. Վոլֆի եւ Օ. Կրեստենի հաջող փորձին: Ըստ դրա՝ Թեոֆանոն Սոֆյա Փոկասի եւ Կոստանդին Սկլերոսի դուստրն էր: Իր ծնողների շնորհիվ նա ժառանգ էր երկրորդական նշանակություն ունեցող ազնվական ընտանիքի, որը մասնակցել էր արաբների դեմ մղված պայքարին եւ դերակատարում ուներ անգամ կայսերական ընտանիքի ներքին քաղաքականության կիրառման գործում: Սոֆյայի մայրը կայսր Նիկեփոր Բ. Փոկասի եղբոր աղջիկն էր, հայրը եղբայրն էր Վարդաս Սկլերոսի, որն ավելի ուշ բռնակալ հռչակվեց: Վերջինիս երկու քույրերից Մարիան առաջին կինն էր Հովհաննես Ա. Չմշկիկի, որը Թեոֆանոյի հորեղբայրն էր եւ կայսր դառնալով՝ նրան ամուսնացրեց Արեւմուտքում: Թեոդորայի հետ Հովհաննես Չմշկիկի երկրորդ ամուսնության շնորհիվ Թեոֆանոն դարձավ ինչպես Մակեդոնական տան օրինական տիրակալի, այնպես եւ Ռոմանոս Ա. Լակապենոսի (կայսր եւ խնամակալը Կոստանդին Է.-ի. 920-944) ընտանիքի ազգականուհին:

Ինչպես Փոկասների, այնպես եւ Սկլերոսների ընտանիքները սերում էին Փոքր Ասիայից: Այս ընտանիքներին պատկանող որոշ ներկայացուցիչների անունները (ըստ վերելում նկարագրված անվանատվության կարգի) այնքան երկար են պահպանվում, որ թույլ են տալիս ենթադրել, թե խոսքը հայկական ծագման բյուզանդացիների մասին է: Դա հատկապես ճշմարիտ է Սկլերոսների ընտանիքի համար, մասամբ համապատասխանում է իրականությանը նաեւ Փոկասների ընտանիքի դեպքում: Այն, որ Հովհաննես Ա. Չմշկիկը հայ էր, ուղղակի հիշատակվում է սկզբնաղբյուրներում եւ հաստատվում նրա Չմշկիկ մականվամբ: «Սա հայերեն բառ է (հայերեն՝ չմուշկ/հողաթափ¹⁹) եւ նույնաբանում է հունարեն “mouzakivzh”-ի հետ»²⁰: Նա իր հերթին պատկանում էր

17 St'iu G. Wolf, Die Kinder Theophanus und Ottos II, in: “Prinzessin”, էջ 168-179:

18 St'iu O. Perst, Zur Reihenfolge der Kinder Ottos II. und der Theophano. “Deutsches Archiv für Erforschung des Mittelalters” 14 (1958), էջ 230-236. նաեւ Engels, Theophanu, էջ 19:

19 Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. Գ., Երևան, 1977, էջ 629-630 (ծան.՝ թարգմանի):

20 Leon Diakonos, V, c. 92 (գերմաներեն թարգմանությունը՝ F. Loretto, Nikephoros Phokas “Der bleiche Tod der Sarazenen” und Johannes Tzimiskes Byzantinische Geschichtsschreiber 10, Graz-Wien-Köln, 1961): Համեմատիր նաեւ Մ. Մ. Կոպիլենկոյի, Մ. Յա. Սյուզումովի, Ս. Ա. Իվանովի կողմից ծանոթագրված բուսերեն թարգմանությունը (Лев Диякон, Искория, перевод М. М. Копыленко, статья М. Я. Сюзумова, комментарий М. Я. Сюзумова, С. А. Иванова, ответственный редактор член-корреспондент АН СССР Г. Г. Литаврин, Москва, 1988, с. 193-194, прим. 65):

նշանավոր հայ ազնվական Հովհաննես Կուրկուսասի ընտանիքին, որը նրա հորեղբայրն էր: Որոշ անունների հաճախադեպությունը նույն ընտանիքի ներսում ծննդաբանության, գաղափարախոսության եւ ազգային ծագման հատկանիշ է, հետեւապես հարցը դրվում է այսպես՝ արդյո՞ք Թեոֆանոս անունը կարող է լույս սփռել նրա ծագման վրա: Եթե անունը թույլ է տալիս, ինչպես նշում է Ֆրանց Թիննեֆելդը²¹, խնդիր չկա ժամանակի բյուզանդական անվանատվությունը կարգավորելու, ընդ որում, ըստ Թիննեֆելդի օրինակի, կարելի է հավելել եւս երկու հետնորդի հայկական ընտանիքից²²:

Ըստ սերնդաբանական հետազոտությունների՝ հույն Թեոֆանոս (ի դեպ արեւմտյան սկզբնաղբյուրները նրան միշտ չէ, որ դրականորեն են բնութագրում) էթնիկական ծագմամբ հայուհի պիտի լիներ: Այս տեսակետը հիմնավորում է պահանջում, քանի որ տվյալ փաստի գնահատումը այսօրվա տեսանկյունից մի ծուռ հայացք է նետում Բյուզանդիայի վրա, վերարտադրում է Բյուզանդական կայսրության հասարակական եւ մշակութային իրական պայմանները: Բյուզանդական կայսրությունը բազմազգ պետություն էր: Քրիստոնեական աշխարհում բոլորի կողմից ճանաչված առանձին կայսրերի հպատակները համերաշխ չէին ոչ միայն այս ընդհանուր գաղափարի, այլ նաեւ եկեղեցական ժողովներում հաստատված ճշմարիտ հավատքի եւ հունա-հռոմեական մշակույթի նկատմամբ բնական հարգանքի ու գնահատման շուրջ: Ներքին եւ արտաքին տարբեր քաղաքական պատճառներով բյուզանդական հասարակության մաս դարձած ժողովուրդների մեջ հայերը, անշուշտ, գրավում էին առաջին տեղը: Սկսած Ը. դարից հայերը բավական շատ են մասնավորապես ազնվականության մեջ, այդ իսկ պատճառով ակնհայտ է ոչ միայն նրանց կենսունակությունը, այլ նաեւ ճուլման հնարավորությունը բյուզանդական հասարակության վերին խավերում²³: Երբ հայերը պատմաբանների կողմից դիտարկվում են հատկապես ռազմական տեսանկյունից, դա համապատասխանում է ժամանակաշրջանի բացառապես բյուզանդական քաղաքական մոտեցումներին: Այսպես կոչված Մակեդոնական վերածննդի սկիզբը, Թ. դարից սկսած Բյուզանդական պետության մշակութային զարթոնքը ոգեւորեց նաեւ հայկական ծագմամբ բյուզանդացիներին (Վարդաս, Փոտ)²⁴: Դա նշանակում է, որ հայ ազգաբնակչությունը, որն ինքնակամ ձուլ-

21 Տե՛ս **Tinnefeld**, Die Braut aus Byzanz. “Prienessin”, էջ 49:

22 Հմմտ. **N. Adontz**, Etudes arméno-byzantines, Lissabon, 1965, էջ 339:

23 Տե՛ս **F. Winkelmann**, Quellenstudien zur herrschenden Klasse von Byzanz im 8. und 9. Jahrhundert (Berliner Byzantinische Arbeiten 54), Berlin, 1987, էջ 229: Հայկական ծագում ունեցող բյուզանդական տիրակալների մասին տե՛ս **Կ. Տէր-Սահակեան**, Հայ կայսերք Բիւզանդիոնի, Ա.-Բ., Վենետիկ, 1927-1935 (ինչ վերաբերում է Թեոֆանոսին՝ տե՛ս **Հր. Աճառյան**, Հայոց անձնանունների քառարան, Բ., Բեյրութ, 1972, էջ 308): **G. Dédéyan**, Les Arméniens en Occident fin X^e-début XI^e siècle, Occident et Orient au X^e siècle. Actes du IX^e congrès de la Société des historiens médiévistes de l'enseignement supérieur public (Publications de l'Université de Dijon 57), Paris, 1979, էջ 123-143, ուր չի հիշատակվում Թեոֆանոս:

24 Բյուզանդական կայսրության մեջ հայ ազգաբնակչության մասին տե՛ս **P. Charanis**, The Armenians in

վում էր, ոչ միայն այն ժամանակվա դավանաբանական բանակավի իմաստով միաբնակ չէր, այլև ուղղափառ հավատի շնորհիվ բյուզանդական ազնվականության հետ սերտաճելու իսկական հիմքեր ուներ: Այնպես որ, հայ ազգաբնակչությունը բնականաբար համախմբվում էր քրիստոնյա որեւէ տիրակալի իշխանության ներքո ձեւավորված քրիստոնեական կայսրության գաղափարի շուրջ, ընդունում եւ ներկայացնում էր նույն մշակութային ավանդույթը: Այս տեսանկյունից երկրորդական էր դառնում էթնիկ ծագումը: Քաղկեդոնի դավանաբանությունն ընդունելով՝ հայ ազգաբնակչությունը դուրս էր գալիս Հայ Առաքելական Եկեղեցու իրավասությունից, ընդ որում բավական վիճելի է մնում օրթոդոքս հայ ազգաբնակչությանը սպասարկող եպիսկոպոսությունների հարցը²⁵:

Թե որքանով էր հայ ազնվականությունը դեռեւս տիրապետում մայրենի լեզվին՝ մնում է անհայտ: Որեւէ եզրակացության հանգելու հիմք չեն տալիս նաեւ Հովհաննես Չմշկիկի՝ Հայաստանի թագավոր Աշոտ Գ. ին ուղղված նամակները, որովհետեւ այդ բնագրերը պահպանվել են միայն հայերեն ավանդությամբ՝ ԺԲ. դարի պատմիչ Մատթեոս Ուռհայեցու երկում²⁶: Այն, որ Հովհաննես Չմշկիկը դեռեւս գիտակցում էր իր ծագումը, տեղեկանում ենք Լեւոն Սարկավագի մի վկայությունից, ըստ որի՝ Չմշկիկը գահակալման առիթով հարկերից ազատել է Արմենիակոն բանակաթեմի իր հայրենակիցիներին²⁷: Թ. եւ Ժ. դարերի տիրակալներն ու ազնվականները, որոնց մեջ գերիշխում են հայկական ծագում ունեցողները (տե՛ս հոդվածի վերջի աղյուսակը), բավարար հիմք չեն տալիս մտածելու հայկական կայսրություն ստեղծելու մասին, թեւ նրանք, ինչպես Ռոմանոս Ա. Լեկապենոսը, փորձում էին սեփական հարստություն (դինաստիա) ստեղծել, այնուհանդերձ խմբավորումներ ձեւավորելու գործում ազգային ծագումը կարեւոր դեր էր խաղում: Առանձին

the byzantine empire, Lissabon, 1963, ինչպես նաեւ **А. П. Каждан**, Армяне в составе господствующего класса византийской империи в XI-XII вв., Ереван, 1975:

25 Այդ մասին տե՛ս **В. А. Арутюнова-Фиданян**, Армяне халкедониты на восточных границ византийской империи (XI в.), Ереван, 1980. նաեւ **Ch. Hannick**, Annexions et reconqêtes byzantines: Peut-on parler d'«uniatisme» byzantin? «Irénikon» 66 (1993), էջ 468: Ծիրակավանի հայկական միավորիչ ժողովի մասին տե՛ս **К. Н. Юзбашян**, Армянские государства эпохи багратидов и Византия в IX-XI вв., Москва, 1988, էջ 98:

[Վերջերս այդ ժողովի առաջադրած պատմաբանասիրական եւ դավանաբանական խնդիրներին անդրադարձան Խ. Պողոս Անանյանը, Ջիռաչինո Ստրանոն եւ Իգոր Դորֆման-Լազարեւը (**Պողոս Անանյան**, Զաքարիա Հայոց Կաթողիկոսի եւ Աշոտ իշխանաց իշխանի թղթակցությունը Փոտ պատրիարքի եւ Նիկողայոս Ա. պապի հետ, Վենետիկ, 1992. **Gioaccino Strano**, Il patriarca Fozio e le epistole agli Armeni: dispute religiose e finalità politiche. - Jahrbuch der österreichische byzantinistik, 55 Band, Wien, 2005, էջ 43-58. **Igor Dorfmann-Lazarev**, Arméniens et Byzantins à l'époque de Photius: deux débats théologiques après le triomphe de l'orthodoxie [Corpus scriptorum Christianorum orientaliū, vol. 609, Subsidia tomus 117], Lovanii, 2004) **թարգմ.**]:

26 Հմմտ. **F. Dölger**, Regesten der Keiserurkunden des oströmischen Reiches von 565-1453, I, München, 1924, էջ 750-753:

27 Տե՛ս **Leon Diakonos**, VI, էջ 100 (ծան. 18, ռուսերեն թարգմանություն, էջ 54):

էթնիկ խմբերի միջև տեղի ունեցող բախումները կամ միմյանց տրվող բացասական գնահատականները չէին վերաբերում կայսերը եւ կայսերական գաղափարախոսությանը, որոնք միավորում էին մարդկանց: Այս հոգեւոր-մշակութային միջավայրում էր մեծացել նաեւ Թեոֆանոն: Անձնական դաստիարակությունը մայրաքաղաք Կոստանդնուպոլսում, ըստ երեւոյթին, կարող էր ազդեցություն թողնել նրա վրա՝ եզրակացնում է Թիննեֆելդը²⁸:

Քանի որ Թեոֆանոն Հովհաննես Ա. Չմշկիկի եղբոր եւ նրա նախորդ Նիկեփոր Բ. Փոկասի ավագ քրոջ դուստրն էր, ապա՝ շնորհիվ Մակեդոնյան հարստության տիրապետության ներքո Չմշկիկների եւ Փոկասների ընտանիքների խնամփոխան, նա ազգական էր նաեւ նախորդ կայսրերին, ինչպես նաեւ նրանց հետնորդներ Բարսեղ Բ.-ին եւ Կոնստանդին Ը.-ին, որը նրան հնարավորություն տվեց 972 թ. ապրիլի 14-ին Հռոմում ամուսնանալ 17-ամյա Օտտո Բ.-ի հետ եւ մոտավորապես 12 տարեկան հասակում թագադրվել: Նա պետք է մտավոր մեծ կարողություններ ունենար եւ լավ կրթություն ստացած լիներ Բյուզանդիայում, քանի որ դա ընդգծվում է արեւմտյան սկզբնաղբյուրներում: Բացի ժամանակակիցներից զարմանք պատճառած հարսնոժիտից, Թեոֆանոյին, իհարկե, ուղեկցում էին բազմաթիվ բյուզանդական պալատական կանայք, խորհրդականներ, արհեստավորներ եւ բնականաբար նաեւ հունարեն խոսող հոգեւոր հայրը, այսինքն՝ մի խոստովանահայր: Այդ մասին որեւէ հիշատակություն չունենք, թեպետ դա ինքնին հասկանալի է միջնադարյան աշխարհում: Սակայն Թեոֆանոն, որը մի այլ, լեզվի առումով եւս օտար մշակութային միջավայր էր մտել, ամենեւին չէր կտրվել հունա-բյուզանդական աշխարհից, ինչպես հայտնի է Հովհաննես Ֆիլագաթոսի հետ նրա շփումից: Ավելին, հավանաբար նա դեռեւս ենթարկվում էր այդ աշխարհին²⁹ ի հեճուկս ճուլման ժամանակակից պրակտիկայի:

Սկզբունքորեն ավելորդ է վիճաբանությունը կապված այս հարցադրման հետ՝ օտար երկրում ամուսնացած այլալեզու տիկինը սովորո՞ւմ էր տեղի լեզուն, թե՞ ոչ: Ինքնին հասկանալի է՝ նա խոսում էր իր ամուսնու եւ նրա շրջապատի լեզվով, որը կարելի է ենթադրել միայն անուղղակի վկայություններից (օրինակ՝ Մանուել Ա. Կոմնենոսի կին Բերտա Զուլցբախցը). 12 տարեկան հասակում նա անխուսափելիորեն նվիրվել է լեզվի սերտմանը: Եթե Թեոֆանոյի դեպքում այլ կերպ է եղել, ապա նրան պետք է համարել պակաս օժտված: Թեպետ նա իր արտաքին տեսքով օտարուհի է մնում, սակայն շուտով նրա բյուզանդականությունը ներդաշնակվում է Արեւմուտքի կայսրուհու

28 Stn **Tinnefeld**, Die Braut aus Byzanz. "Prinzessin", passim:

29 Հովհաննես Ֆիլագաթոսի, ինչպես նաեւ Թեոֆանոյի հունական միջավայրի մասին տե՛ս **Ch. Hannick**, Kirche und Ortodoxie im 10. Jahrhundert. K, էջ 18: Օտարության մեջ լեզվի եւ մշակույթի խորը գիտակցության մասին հմն. **E. Oksaar**, Spracherwerb als Kulturerwerb, in: Alexander von Humboldt Stiftung - Mitteilungen Nr. 62 (Dez. 1993), էջ 30:

դիրքի հետ³⁰: Նա շաղկապում է իր կրթվածությունը եռանդի հետ, մի հատկություն, որը դեռևս Ե. դարում ցուցաբերել էր Թեոդոսիոս Բ.-ի քույր Պուլխերիան, որն աչքի էր ընկնում գրեթե նույն տարիքում ի հայտ բերած բարձր դաստիարակությամբ եւ քաղաքական կամքով:

Գերմանիա գալուց անմիջապես հետո Թեոֆանոն ներքաշվեց Օտտո Բ.-ի ներընտանեկան վեճերի մեջ, եւ տեւական լարված փոխհարաբերություններ հաստատվեցին նրա եւ սկեսրոջ՝ Ադելհայդի միջեւ: Նրա ամուսնությունը Օտտո Բ.-ի հետ, թվում է, ներդաշնակ պետք է լիներ, քանի որ Թեոֆանոյի ինքնագիտակցությունը եւ քաղաքական հետաքրքրությունները՝ ամրապնդված բյուզանդական աշխարհայեցողությամբ, ներգործում էին Օտտո Բ.-ի գործողությունների վրա: Այս ամուսնությունից հայտնի են չորս երեխայի անուններ. Սոֆյան, որն ակնհայտորեն բնավորությամբ նման էր իր մորը, Ադելհայդը, Մաթիլդան եւ Օտտո Գ.-ը: Դստերը դաստիարակվում էին վանքում, քանի որ, ի տարբերություն Կոստանդնուպոլսի կայսրերի, գերմանական կայսրերը դեռևս կառավարման մայրաքաղաք չունեին, շրջում էին նստավայրից-նստավայր: Որդու՝ թագաժառանգի դաստիարակությունը Օտտոն հանձնարարել էր անձամբ Թեոֆանոյին, որը Կալբերիացի հույն Հովհաննես Ֆիլազաթոսի եւ Հիլդեսհայմի եպիսկոպոս Բեռնարի նման շահել էր նրա վստահությունը:

976 թ. Բյուզանդիայում տեղի ունեցավ տիրակալի փոփոխություն, որը պետք է դիպչեր նաեւ Թեոֆանոյի շահերին: Նրա հորեղբայր Հովհաննես Ա. Չմշկիկը, որի շնորհիվ Թեոֆանոն ամուսնացավ Արեւմուտքում, անսպասելիորեն, վեցամյա գահակալումից հետո մահացավ արաբների դեմ մի հաջող ռազմարշավի ճանապարհին: Իշխանությունը պետք է անցներ այդ պահին 18-ամյա Բարսեղ Բ.-ին (եւ իհարկե, քաղաքական տեսանկյունից ստվերում ապրած նրա եղբորը՝ 16-ամյա Կոստանդին Ը.-ին): Գահաժառանգի խնամակալության ավարտով ուղի հարթվեց իշխանության փոփոխության համար, որը հարվածեց նաեւ Սկլերոսների ընտանիքին, որից սերում էր Թեոֆանոն: Իհարկե, նրանք չէին ցանկանում բավարարվել այդ նոր հարաբերություններով: Բարդաս Սկլերոսը՝ ժամանակի նշանավոր ռազմական հրամանատարներից մեկը, Չմշկիկի աներձագը, Թեոֆանոյի հորեղբայրը եւ նրա հայր Կոնստանդինի եղբայրը, հրաժարվեց ճանաչել նոր կայսրը եւ արշավեց Կոստանդնուպոլսի վրա՝ դաշնակից ունենալով իր եղբայր Կոստանդինին՝ Արեւմուտքի թագուհու հորը: Արդյո՞ք Թեոֆանոն ծանոթ էր այդ իրադարձություններին: Կայսր Բարսեղ Բ.-ն հարձակվեց ինքնակոչ Բարդաս Փոկասի՝ Թեոֆանոյի քեռիներից մեկի վրա: Պայքարն անորոշ ժամանակով ձգվեց, մինչեւ Բարդաս Սկլերոսը 979 թ. կրած մի պարտությունից հետո ստիպված փախավ արաբների մոտ³¹: 985 թ. Բարսեղ Բ.-ն հաշվեհարդար տեսավ նաեւ

30 Այդ մասին տես **G. Althoff**, *Vormundschaft, Erzieher, Lehrer-Einflüsse auf Otto III. K.*, էջ 284:

31 Նրա եւ այս ընտանիքի մասին տես **W. Seibt**, *Die Skleroi. Eine prosopographisch-sigillographische Studie*

Լեկապենոսների տան ներկայացուցիչ, այն ժամանակվա իր խորհրդատու Ռոմանոս Ա. Լեկապենոսի ապօրինի որդի՝ ներքինի Բարսեղի հետ. այնպես որ այժմ կարող էր խոսել իր միանձնյա իշխանության մասին:

Օգտագործելով կառավարական այս հեղաշրջումը, ինչպես նաեւ Բուլղարների դեմ Բարսեղի՝ սկզբում անհաջող ռազմարշավը (հիշիր 986 թ. պարտությունը)՝ Վարդաս Փոկասը կրկին ցանկացավ Բյուզանդիա վերադառնալ եւ ապստամբել կայսեր դեմ: Այդ պահին Բարսեղը կրկին արշավեց Վարդաս Փոկասի դեմ: Սակայն Սկլերոսի դեմ գնալու փոխարեն, գտնելով փոքրասիական հզոր ընտանիքների պաշտպանությունը՝ 987 թ. կայսր հռչակվեց: Վարդաս Սկլերոսին հաջողվեց համաձայնության գալ Վարդաս Փոկասի հետ, որով նա ցանկացավ հանգիստ շնորհել կայսրության մի մասին: Փոկասը, որն իր ետեւում հզոր բանակ ուներ, շուտով ձերբակալեց ինքնակոչ բռնապետին, ինչպես նաեւ նրա եղբայր Կոստանդինին (Թեոֆանոյի հորը) եւ արշավեց Կոստանդնուպոլսի վրա: Հայտնվելով բուլղարական վտանգի եւ կայսրությունում քաղաքական ուժերի միաժամանակյա պայքարի անելանելի պայմաններում՝ բյուզանդական կայսրը դիմեց Կիեյյան Ռուսիայի իշխան Վլադիմիրի օգնությանը: Վերջինիս ռազմական օգնությունը փրկեց կայսեր իշխանությունը, եւ, որպես փոխհատուցում, կայսեր քույր, ծիրանաձնունդ իշխանուհի Աննան ամուսնացավ Վլադիմիրի հետ, որն իր ժողովրդի հետ միասին քրիստոնեություն ընդունեց: Աննան 26 տարեկան էր եւ Բյուզանդիայի սահմաններից դուրս ամուսնացած առաջին ծիրանաձնունդն էր: Նա էր Նիկեփոր Բ. Փոկասի այն ծիրանաձնունդ «խորթ աղջիկը», որի ձեռքը ժամանակին խնդրում էին Օտտո Բ.-ի համար: Վարդաս Փոկասը մահացավ, որից հետո Վարդաս Սկլերոսը մեկ անգամ եւս փորձեց իշխանությունն իր ձեռքը վերցնել, սակայն նույն տարում էլ հանձնվեց: Երկու տարի հետո՝ 991 թ. մարտին, մահացավ Վարդաս Սկլերոսը, որից հետո՝ նրա եղբայր Կոստանդինը:

Մինչեւ օրինական կայսր Բարսեղ Բ.-ի իշխանության վերջնական ապահովման պահը Բյուզանդական կայսրությունում տեղի ունեցած իրադարձությունները բերեցինք հիմնական գծերով, քանի որ Թեոֆանոյի ազգականների ոչնչացումը կարող էր լույս սփռել Բարսեղ Բ.-ի արեւմտյան քաղաքականության որոշ տեսանկյունների վրա: Դա ցույց է տալիս, որ հզոր, հատկապես հայկական ծագմամբ ընտանիքների ազգակցական կապերը չէին մղում համատեղ գործողությունների, մրցակցությունը չէր խրտնեցնում իշխանությունից: Թեոֆանոն՝ հայկական ծագմամբ «հույնը», նույնացվում էր բյուզանդական մշակութային աշխարհի հետ, ավանդույթ, որը փոխանցվեց նրա միակ որդուն՝ Օտտո Գ.-ին, որի «*graecisca subtilitas*»-ը (հունական նրբություն) եւ

(Byzantina Vindobonensia 9). Wien, 1976: Փոկասների ընտանիքի վերաբերյալ տե՛ս J. - C. Cheynet, Les Phocas. G. Dagron - H. Mihăescu, Le traité sur la guerilla (De velitatione) de l'empereur Nicéphore Phocas (963-969), Paris, 1986, էջ 289-315:

«Graecorum industria aliqua scintilla»-ը (հունական աշխատասիրության կայծ) դիտվում են իբրեւ բարիք (հմմտ. Հերբերտ Աուռիլակցու նամակը Օտտո Գ.-ին)³²: Բյուզանդական կայսրության քաղաքականության նկատմամբ ակնածանքը, անշուշտ, թույլ չէր տալիս Թեոֆանոյի ամուսին Օտտո Բ.-ին՝ վատ բան ասել նրա մասին: Նրա աստիճանաբար աճող ազդեցությունը ամուսնու եւ որդու նախաձեռնությունների վրա, հատկապես առաջինի՝ 983 թ. հանկարծահաս մահից հետո, նկատելի է ամեն ինչում: Ամուսինն առանձնահատուկ, թագուհուն վայել վերաբերմունք ուներ Թեոֆանոյի նկատմամբ, ինչպես արձանագրված է ամուսնության ճոխ վկայականում, որը պահվում է ներքին սաքսոնական քաղաք Վոլֆենբյուտելի արխիվում պահվող վավերագրի («coimperatrix augusta nec non imperii regnorumque consors» - թագակից օգոստոս կայսերական իշխանության թագակից) բանաձեւման եւ անգամ ստորագրության արական ձեւի մեջ՝ «Theophanius imperator augustus» (Օգոստոս կայսր Թեոֆանոս)³³:

Սակայն Եկեղեցու տեսանկյունից եւս քաղաքականության հիմքում ընկած են բյուզանդական պատկերացումները: Օրինակ՝ կոմսության փոխանցման համար Եկեղեցու օգնությունը ստանալը³⁴, նրա ձեռնարկումները Լեհաստանի քրիստոնեացման ժամանակ, կայսրության կողմից եկեղեցական կազմակերպության փորձարկումը կարող են քննարկվել Բյուզանդիայի կողմից Ռուսիայում քրիստոնեության տարածման հետ սերտ կապի մեջ³⁵: Այդ իսկ պատճառով թվում է, թե Թեոֆանոն նաեւ Կիեւի հետ է կապ ունեցել, որի նպատակն անհասկանալի է մնում, մանավանդ, որ միակ սկզբնաղբյուրը՝ հիմնուսական Նիկոնյան ժամանակագրությունը, ավելի քան երկիմաստ է³⁶: Համերաշխությամբ կամ «*liens d'amitié avec Byzance*»³⁷ (Բյուզանդիայի հետ բարեկամական կապով) արտահայտությունը հեռու է տանում, ավելի շուտ կարելի է ասել, որ Թեոֆանոն իր բյուզանդական պատկերացումները ի սպաս էր դնում արեւմտյան կայսրության հետաքրքրություններին:

980 թ. Օտտո Բ.-ի եւ Թեոֆանոյի ժամանումը Իտալիա՝ դրանից քիչ առաջ ծնված գահաժառանգի հետ, պատշաճում է այս հիմնադրությունին: Դրանից կարող ենք ենթադրել, որ Բարսեղ Բ.-ն, որը Բարդաս Սկլերոսի հեռանալուց հե-

32 Stü F. Rädle, Lateinische Literatur im Umkreis Bernwards. B, էջ 204:

33 Հարցերի այս խմբի մասին մասնավորապես տե՛ս F.-R. Erkens, Die Frau als Herrscherin in ottonischfrühalsischer Zeit. K, էջ 245-259:

34 Stü F. Engels, Theophanu, էջ 35:

35 Հմմտ. J. Kloczowski, La nouvelle Chrétienté du monde occidental. La christianisation des Slaves, des Scandinaves et des Hongrois entre le IX^e et XI^e siècles. տե՛ս Evêques, moines et empereurs (610-1054), hrsg. G. Dagron, P. Riché, A. Vauchez (=Histoire du christianisme des origines à nos jours IV), Paris, 1993, էջ 886:

36 Այդ մասին վերջերս հրապարակված աշխատությունը՝ S. Senyk, A history of the church in Ukraine I (Orientalia christiana analecta 243), Rom, 1993, էջ 303, ինչպես նաեւ J. Fried, Theophanu und die Slawen. Bemerkungen zur Ostpolitik der Kaiserin. K, էջ 361-370:

37 Stü F. T. C. Lounghis, Les ambassades byzantines en Occident depuis la fondation des états barbares jusqu'aux Croisades (407-1059), Athen, 1980, էջ 217:

ստո կարողացել էր ապահովել սեփական իշխանությունը եւ նպատակ ուներ այդուհետեւ իր քաղաքականությունը եւս տեղափոխել Իտալիա, ստիպված էր որպես նվաճողական գործողություն դիտել Օտտոյի երթը դեպի հարավային Իտալիա, մանավանդ որ Օտտոն թափանցել էր բյուզանդական Տարենտոյի մարզ: Թեեւ կատարվածը վերջինիս բյուզանդացի կնոջ օժիտի ապահովության համար էր, Բարսեղն այն վիճարկում էր ընդդեմ արաբների, սակայն հենց այդ օժիտն էր, որ վերաբերում էր նախորդ կայսրերին, որոնք պարտավորեցնում էին Թեոֆանոյին իբրեւ խնամակալ եւ ազգական: Օտտոյի մտադրությունը լիովին հասկանալի էր, որը կարելի է բացատրել միայն Թեոֆանոյի ավել կամ պակաս ազդեցությամբ, քանի որ իր տիտղոսում Օտտոն հավելում է՝ «Romanorum imperator et invectissimus augustus»³⁸ (Հռոմեների կայսր եւ անհաղթ Օգոստոս), ինչը բյուզանդացիներին թվում էր մի չսված հանդգնություն: Ըստ բյուզանդական պատկերացման մտահղացած ծրագրի՝ ավարտվում է հանգրվանային թագավորությունը, եւ մայրաքաղաք է դառնում Հռոմը: Իտալական ռազմարշավն ավարտվում է 982 թ.՝ Կոտորնի ճակատամարտում արաբներից կրած աղետալի պարտությամբ:

Մեկ տարի անց անակնկալ վախճանվում է Օտտո Բ.-ն, եւ սկսվում է Թեոֆանոյի անչափահաս որդու՝ դեռեւս երեքամյա գահաժառանգի խնամակալությունը, որն ընդհատվում է 991 թ. հունիսին թագուհու անժամանակ մահով: Ի միջի այլոց, դա տեղի է ունեցել իր հոր մահից երեք ամիս հետո: Ահա թե ինչպես է բնութագրում Թիթմար Մերսեբուրգցին թագուհի Թեոֆանոյին՝ իբրեւ գահաժառանգի խնամակալի. «Թերեւս նա թույլ տոհմից էր, բայց պիտանի էր նրա դաստիարակությունը եւ կամքը, ինչպես նաեւ հրաշալի կենցաղը, որը հազվադեպ է Հունաստանում. այնպիսի տղամարդկային զգոնությամբ էր նա պահպանում իր որդու իշխանությունը՝ կայուն սիրալիրությամբ ազնիվների եւ սարսափազդու վեհությամբ՝ անհնազանդների նկատմամբ»³⁹: Այս բնութագիրը, որը հավանաբար ավելի վաղ է տրվել⁴⁰ որպես բնորոշում (Topos), փոխարինում է արեւմտյան սկզբնաղբյուրներում նրա ութամյա իշխանության մասին պահպանված աղքատիկ տեղեկություններին: Բյուզանդական սկզբնաղբյուրներում Թեոֆանոյին վերաբերող լռությունը չպետք է միայն վերագրել Արեւմուտքում ամուսնացած բյուզանդուհու նկատմամբ անհետաքրքրությամբ: Բյուզանդական պատմիչները հակված են ներկայացնելու Կոստանդնուպոլսի տիրակալների պատմությունը, այդ իմաստով նրանք հաճախ են գրում որեւէ տիրակալի կամ հարստության մասին, ամեն դեպքում նրանք հարմարվում են Հռոմեական կայսրության գնահատման պահանջներին⁴¹:

38 Stü G. Wolf, Kaiser Otto II.(973-983) und die Schlacht von Cotrone am 13. Juli 982. "Prinzessin", էջ 156:

39 Thietmar von Merseburg, Chronik IV 10 (Trillmich: 125-127).

40 Stü Engels, Theophanu, էջ 36:

41 Stü H. - G. Beck, Das byzantinische Jahrtausend, München, 1978, էջ 124:

Արեւմուտքի՝ օրինական տիրակալի դեմ բռնակալներ տված բյուզանդահայկական երկակի ընտանիքից սերող կայսրուհին, ըստ ԺԱ.-ԺԲ. դարերում ձեւավորված մտայնության, չպետք է մտնել Բյուզանդիայի պատմության մեջ: Դա կարելի է նաեւ արեւմտյան հիշողության համար, եւ Գ. Վոլֆն իր նրբանկատ հետազոտության մեջ ավստասանքով է հիշատակում Թեոֆանոյին. հասկապես, որ Թեոֆանոն ներքողյանում դրվատվելու համար բավական վաղ՝ մոտ 30 տարեկանում է վախճանվել: Արեւմտյան կայսերական գահին «հույն» էր բազմել. Թեոֆանոյի նկատմամբ այս վերաբերմունքն արտահայտվել է նաեւ Քյոլնի Ս. Պանտալեոն եկեղեցում նրա գերեզմանի ընտրությամբ: Եկեղեցի, որը նվիրված է մի հույն վկայի՝ նիկոմեդացի բժիշկ Պանտելեմոնին, որը մեծարվում է նաեւ Հայ Եկեղեցում Պանտալեոն անվամբ⁴²: Բյուզանդական ծագումը պարտավորեցնում էր Թեոֆանոյին ցույց տալ, թե իր համար ինչ նշանակություն ունեին հոգեւոր արմատները:

ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻՅ ԹԱՐԳՄԱՆԵՅ
պ.գ.դ. ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆԸ

42 Հայ Եկեղեցում Սուրբ Պանտալեոնի հիշատակի հարգման եւ նրա անվան՝ Զ. դարից մինչեւ ԺԱ. դարի սկիզբը կրողների մասին տե՛ս **Հր. Աճառյան** (ծան. 22), Դ., էջ 221, իսկ ավելի ընդարձակ՝ **P. Peeters**, *Bibliotheca hagiographica orientalis*, Brüssel, 1910, համար 835 եւ 836: